ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երևան 19 նոյեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Նախագահությամբ՝ Ռ. Պապայանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Հ. Դանիելյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Ռուբեն Թորոսյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ Ընտրական օրենսգրքի 40.1 հոդվածի 3-րդ կետի 3-րդ պարբերության և 63.2 հոդվածի 3-րդ կետի, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 143 հոդվածի, ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 232 հոդվածի սահմանադրականությունը:

2-րդ դատական կազմը գտավ, որ ներկայացված դիմումը ենթակա է մերժման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի պահանջներից ելնելով, որի համաձայն՝ անձը համապատասխան պահանջով Սահմանադրական դատարան կարող է դիմել միայն այն դեպքում, երբ սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները: Տվյալ դեպքում դիմումին կից փաստաթղթերում առկա չէ ՀՀ Վճռաբեկ դատարանի համապատասխան ակտը, որը կվկայեր դիմողի կողմից դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառած լինելու հանգամանքը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69 հոդվածի 6 կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

Քաղ. Ռուբեն Թորոսյանի դիմումը՝ ՀՀ Ընտրական օրենսգրքի 40.1 հոդվածի 3-րդ կետի 3-րդ պարբերության և 63.2 հոդվածի 3-րդ կետի, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 143 հոդվածի, ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 232 հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու մասին, մերժել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ

Նախագահող՝

Անդամներ՝